

863

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱԳՐԱՐՆԻ ՌԵՎՈԼՈՒՑԻՈՆԻ  
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

№ 1

1920 թ.

ՆՈՅԵՄԲՐԻ 29

1929 թ.

ԲԱՄԲԱԿԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ  
5 ՏԱՐԱԾՄ

A 7954

— — —

15790

ԲԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ - 1929



Հրատ. № 1146

ԹԵՏՏՐԱՆԻ ՑԵՐԿՐՈՐԴ ՏՊԱՐԱՆ ՑԵՐԵՎԱՆՈՒՄ

Դրամ. № 2903(բ) Տիրաժ 15000 Գալ. № 1265

Բամբակի՝ վորպես արդյունաքերական  
առլրանքի՝ ցանքսի զարգացման և քեր-  
քատվության բարձրացման խնդիրները  
չափազանց խոշոր տնտեսական և քաղաքա-  
կան նշանակություն ունեն խորհրդային  
իշխանության ընդհանուր ժողովրդական  
անտեսության ու լերկը ինդուստրիացման  
աշխատանքների ասպարեզներում:

Բամբակագործությունը, վորը մեր գյու-  
ղատանտեսության բոլոր կուլտուրանե-  
րի (հացաբույսերի, անասնապահության,  
ալյուրծործության, ծխախոտագործության,  
շերամապահության) մեջ այսոր ամենաա-  
ռաջնակարգ ուշադրության և արժանացած  
ինչպես կոմկուսի և խորհրդային ու կոռպե-  
րատիվ կազմակերպությունների, նույնապես  
և վողջ հասարակության կողմից,—դա վոչ  
թե միայն նրա համար ե, վոր խնդիր ե  
դրված բարձրացնել գյուղացու տնտեսու-  
թյունը և նրանց անտեսական դրությունը  
բարելավել, այլ ամենագլխավորն այն ե, վոր  
բամբակագործության միջոցով ապահովելու

յենք Խորհրդավին Միության մեջ որեցոր  
աճող և զարգացող տեքստիլ արդյունաբե-  
րական գործարանները:

Տեքստիլ արդյունաբերությունը մեր  
ժողովրդական տնտեսության հիմնական  
ու առաջնակարգ ճյուղերից մեկն և,  
վորը հիմնական և կենտրոնական աշխա-  
տանքներից մեկն և հանդիսանում ԽՍՀՄ-ի  
հնգամյա ծրագրի մեջ: Այդ այդպես և, վո-  
րովինետև ուժեղացնելով տեքստիլ արդյու-  
նաբերությունը՝ նախ և առաջ բավարարե-  
լու յենք մանուֆակտուրային այն սուր  
պահանջը, վոր այժմ գոյություն ունի գլու-  
ղում ու քաղաքում. յերկրորդ՝ լայնաց-  
նելով տեքստիլ արդյունաբերությունը՝  
նորանոր միլիոնավոր բանվորներ ենք  
ընդգրկելու այդ նոր գործարաններում, և  
վորպես այդ բոլորի արդյունք՝ ավելի յենք  
ուժեղացնելու գլուղի և քաղաքի աշխատա-  
վորական դաշինքը, ապահովելու լերկը ի  
ինդուստրիացման հսկա ծրագրի իրագոր-  
ծումը՝ մեր իսկ աշխատավորական ուժերով:

ԽՍՀՄ-ի տեխնիկա արզուաքերության  
ծրագիրը մեկ և—մեր բոլոր բան-  
վորների ու աօխառավոր գյու-  
ղացիների ծրագիրն է

Հայաստանի բամբակագործության զար-  
գացումը, վորը խոշոր հեռանկարներ  
ունի, անբաժանելի մասն և ամբողջ Խոր-  
հըրդային Միության բամբակագործության  
խնդիրների, քանի վոր խորհրդային իշխա-  
նության զարգացող արդյունաբերությունը,  
և այդ շարքում նաև բամբակագործու-  
թյունը, տեքստիլ արդյունաբերությունը,  
բոլոր Խորհրդային Հանրապետությունների  
աշխատավորներինն և, քանի վոր տեքստիլ  
արդյունաբերության հնգամյա ծրագիրը  
մեկ և և բոլորի համար:

Գյուղատնտեսության ընդհանուր զարգա-  
ցումը և բամբակագործության բերքատվու-  
թյան բարձրացումն առաջին հերթին պա-  
հանջում են գյուղը լրիվ մեքենայաց-  
ման յենթարկել վոր իր հերթին առանց  
յերկը խոշոր խնդուստրիալին զարկ տալու  
անկարելի կլինի: Այսոր, յերբ Խորհրդային  
Հայաստանի գյուղն ունի հարկուրավոր

տրակտորներ և տասնյակ հազարներով ալլ գյուղատնտեսական գործիքներ, այդ բոլորն արդյունք և նրան, վոր Կոմկուսի ճիշտ ղեկավարությամբ խորհրդավին իշխանությունը, ամուր պահելով գյուղի և քաղաքի դաշինքը, կարողացել և հաղթահարել բոլոր այն դժվարությունները, վորոնք նախքան Հոկտեմբերյան հեղափոխությունը միշտ գոյություն են ունեցել մեր ընդհանուր անտեսական ու շինարարական ֆրոնտներում:

Հայաստանը ևս իր վորոշ հողամասերով բամբակագործական վայր և յեղել թե ցարական կառավարության և թե դաշնակցական կառավարության որերին: Սակայն այսօրվա բամբակագործությունը և նրա դերն ու նշանակությունը միանդամայն այլ են:

Ցարական կարգերում այն ժամանակ, յերբ Հայաստանում ցանվելիս և յեղել 10—15,000 հեկտար բամբակ, այդ ամբողջ բներքը գտնվելիս և յեղել միքանի վաճառականների, առևտրականների, մասնավոր գործարանների ձեռքին, վորոնք միշտ

իրենց գոյությունը պաշտպանել են աշխատավոր գյուղացիներին շահագործելով։

Դաշնակցական կառավարությունը, վորի կլանքը նման եր ճնճղուկի կյանքին, բամբակագործության խնդրով չեր կարող զբաղվել, և այդ կառավարության որերին եր, վոր Հայաստանի բամբակագործությունը հասել եր զբոների։ Ծակ այժմ, յերբ Հայաստանի խորհրդայնացումից հետո արդեն բամբակագործությունն ստացել և աշխատավորական պետական նշանակություն, նրա զարգացումն ընթանում է մեր յերկը ընդհանուր վերելքի հետ։

### Բամբակագործության զարգացման ռեժիսուր

Բամբակի ցանքի աարածությունը և թերթատվությունը մեզանում վոչ թե հասել և մինչպատերազմիան տարածության, այլ նու արդեն անցել եւ Նախապատերազման ժամանակ (14. թվին) Հայաստանի բամբակի ցանքը յեղել է 11,820 հեկտար, մինչդեռ այսոր՝ 29. թվին ցանքի տարածությունը, անցնելով նախապատերազմիան

ցանքսի տարածությունից, հասել ե 13,400  
հեկտարի։ Մեր տնտեսական մինչակամյան  
վերելքի մեջ ունեցած ընդհանուր թափը,  
ինչպես և բամբակի հետագա զարգա-  
ցումը պետք է ընթանա ավելի արա-  
գությամբ, վորպեսզի նա կարողացած  
լինի գյուղատնտեսության հումուկի ար-  
տադրանքով միանգամայն ապահովել ար-  
գունաբերության բոլոր ճյուղերը, նրանց  
շարքում և տեքստիլ արդյունաբերությունը։

Խորհրդավին յերկրներում բամբակա-  
գործությունը գեռ մինչև այժմ այնքան չի  
բարձրացել, վոր մինք մեր սեփական բամ-  
բակով ապահովենք տեքստիլ արդյունաբե-  
րության ալսորվա պահանջը և թե նրա  
հետագա զարգացման ընթացքը։ Ահա այս  
հանգամանքը նկատի ունենալով ե, վոր  
Համամիութենական կոմմունիստական կու-  
սակցության կենտրոնմը մեր բոլոր բամբա-  
կացան շրջանների կուսակցական, խորհըր-  
դավին և կոռպերատիվ կազմակերպություն-  
ների ու բամբակացան աշխատավոր գյու-  
ղացիների առաջ պահանջ և դրել «ընթացիկ  
հնգամյակում բամբակացործության ցանքսերի

բնդարձակումը յեվ բերքատվության բարձրացումը կատարել այն հաւախվ, վորապեսզի ննգամյակի վերջում Միուրենական տեխնիկա արդյունաբերությունը վոչ միայն ազատագրվի արտասահմանյան բամբակի ներմուծումից, այլ յեվ տեխնիկա արդյունաբերության հետագա զարգացման ու լայնացման համար ունենա անհրաժեշտ պատրա:

### Հնգամյակի վերջում առնվազն 48

միլիոն ֆուր բամբակ

Խորհրդային Միության բամբակի զարդարումը վերջին տարիներում ունեցել է զգալի նվաճումներ: 1925 թվին ցարական Ռուսաստանի բամբակի բերքը յեղել է ընդամենը **20,012,000** փութ, վորը պատերազմի և հեղափոխության տարիներին ընկնելով՝ 1925 թվին հասել է իննը միլիոն յոթ հարյուր հազար փթի, և նրանից հետո այդ զարգացումը նորմալ ընթացք ստանալով՝ 26 թվին, բերքը յեղել է մոտ **10,000,000**, 27 թվին՝ **13,000,000**, 28 թվին՝ **15,000,000**, 29 թվին լրնելու յե 18,900,000, սակայն զարգացման այդ տեմպը մեր տեքստիլ

արդյունաբերություն զարգացման համար  
անբավարար համարելով՝ այժմ ինդիր և  
դրված՝ հնգամյակում բամբակն ավելի ա-  
բար թափով զարգացնել նրա բերքը 30  
թվին հասցնելով 27.002.415 ֆթի, 31 թվին՝  
36.001.185 ֆթի և վերջապես հնգամյակի  
վերջին տարում՝ 1932 թվին՝ վոչ պակաս  
48.003.615 ֆթից:

**Անդրկովկասում բամբակի բերքը  
հնգամյակում հասցնելու յինք  
5.500.000 ֆրի**

Խորհրդային իշխանության տնտեսական  
ընդհանուր զարգացման քաղաքականու-  
թյունը տարբերվում է կապիտալիստական  
յերկրների քաղաքականությունից հենց  
նրանով, վոր մեզ մոտ այդ զարգացումը  
կատարվել ու կատարվում է ծրագրավիճակի  
կերպով:

**Անդրկովկասը (Աղբբեջան, Վրաստան և  
Հայաստան) ևս անցյալում, թե ներկայիս  
և թե հետագայում լեզել եւ ու լինելու յե-  
րանքակացան շրջան իր վորոշ հողամասե-  
րով: Ցարական կարգերում (նախքան պաշ-**

տերազմը) բամբակի ցանքը յեղել և մոտ 132,000 հեկտար (Ազրբեջանում 112,000, Հայաստանում 12,000, իսկ Վրաստանում 8,000): Անդրկովկասի պայմաններում մեր ժողովրդական տնտեսության այս ճյուղը գեռ մինչև այսոր ամբողջովին չի հասել նախապատերազման թվերին, այսինքն 1929 թվին Անդրկովկասի ցանքսի թիվը հասնում և մոտ 129,000 հեկտարի:

Համեմկումկուսի կենտրոնը և նրանից հետո անդրկովկասայան կուս, և խորհրդավին որպանները հատուկ ուշադրություն դարձնելով այս կարեոր մօմենտի վրա, արձանագրել են, վոր Անդրկովկասը ևս խոշոր հեռանկար և տվյալներ ունի, վորի համար ծրագրել են հնդամբակի պլանով բամբակի փաստորեն ցանքսի տարածությունը հասցնել 30 թվին 180,655 հեկտարի և 32 թվին՝ 250,000 հեկտարի. ալգորիտմի հնդամբակի վերջում բամբակի բերքը մեղ մոտ պետք է բարձրանա այն հաշվով, վորագիսդի մենք ևս Միութենական ընդհանուր տեքստի արդյունաբերությունը հասցնենք 5,500,000 փութ զատՃ բամբակի, վորը կազմելու չե ընդհանուրի 11 ու կես առկուսը:

Անդրկովկասյան բամբակագործության  
հեզամյակի մթ տոկոսը լրացնելու յե  
նայաստաճը

Խորհրդավային Հայաստանի բամբակադրու-  
ծության հետանկարները և նրա գերը բոլո-  
րովին փոքր չեն, ինչպես կարծում են շա-  
տերը։ Այն ժամանակ, յերբ մենք մոտ  
ունենք 48,000 հեկտար ջրով ապահովված  
բամբակի պիտանի վարելահող, այդքանից  
դեռ 15,000 հեկտարն ե, վոր ողագործ-  
վում ե բամբակի համար։

Բամբակացան շրջաններում ծխախոտը,  
շերամը, այզեգործությունը, չալթուկը կամ  
բանջարաբուծությունը չե, վոր պիտք է  
զարդանանա, այլ ընդհակառակը, այդ բոլորի  
սեղմելով ե, վոր բամբակի համար պիտանի  
բոլոր հողերը հատկացվելու յեն բամբակին,  
վորի համար Համեկի Կենտրոնը վորոշակի ա-  
սել ե՝ բացարձակարեն անբարյատելի համա-  
րել ջրաբի բամբակի ցաների համար պիտա-  
նի հողերը այլ կուլտուրաների համար ոգտա-  
գործելը։

Ընդհանուր բամբակագործության զար-  
դացման 5-լակով նախատեսված 48,000,000

փութ մաքուր բամբակից Խորհրդային Հայաստանը 32 թվին տալու յե 900.000 գ., վորը կազմելու յե մոտ 2 տոկոս։ Միանգամայն ճիշտ չեն նրանք, վորոնք չնշին նշանակություն են տալիս այս յերկու տոկոսին, մանավանդ վոր Անդրկովկասի ընդհանուր բամբակի բերքի մեջ, վոր 32 թվին կազմելու յե միութենական բերքի 11 և կես տոկոսը, Խորհրդային Հայաստանի բերքը հանդեպ Անդրկովկասի կազմելու յե 16 տոկոս, մի հանգումանք, վորը մեր պայմաններում բամբակագործության նշանակությունն ավելի յե մեծացնում, յեթե նկատի լինք ունենում, վոր Անդրկովկասի հնգամյակի կիրառումն իր հերթին բամբակագործության և տեքստիլ արդյունաբերության հնգամյակը լրացնող մի գլխավոր մասնիկն և համարվում։

**34.000 եեկար բամբակի ցանք**

**1932 թվին**

Բամբակագործության զարգացման տեմպը մեղ մոտ պետք և ընթանա այն թափով և այն հաշվով, վոր հնգամյակի վերջում մեր այսորվա 13.400 հեկտար ցանքը

հասցված լինի վոչ պակաս քան 34,000 հեկտարի, վորով միայն ապահոված ենք լինելու Անդրկովկաստան և Միութենական հնգամկակների մեջ մեր բաժին պարտականության կառարումը։ Հնգամյակի առաջին տարին համարյա իր բոլոր մասերով ապացուցել ե, վոր նա վոչ միայն ռեալ ե, այլ շատ խնդիրներում վերանայման ու ավելացման լենթակա յե։ Այժմ, իրբ ամենուրեք քննության ե դրվում բամբակի ընդհանուր հնգամյակի ծրագիրը կենտրոններից մինչև գյուղեր, այդ բոլոր ծրագրերը վոչ թե միայն ռեալ են համարվում, այլ ամեն տեղ ավելացումներ են արվում, հետեւվագես տատանումները և վախկությունը չե, վոր հանդես պետք ե բերվեն այս չափաղանց կարեոր ֆրոնտի աշխատանքներում, այլ հեղափոխական եներդիալի կաղմակերպչական ունակություններն ու կարողություններն են, վոր պետք ե ցուցաբերվեն։ «Վոչ մի տատանում բամբակազործուրյան հնգամյակի ասպարիզում»։

ՀՅՊՈԱՄՅԱԿԻ կիրառումը՝ պահանջում  
և ճկուն յեվ արտադրանքին մոռ  
ապագարաներ

Գյուղի ներկա կառուցմամբ արտադրան-  
քի կոռալերացման և կոլլեկտիվացման խըն-  
դիրներն այսոր իրենց մեծությամբ գրված  
են առաջին հերթին գյուղատնտեսական կոռ-  
պերացիակի և ներկա դեպքում նրան զիխավոր  
միավորներից մեկի՝ բամբակիկոռալերացիայի  
առաջի թիե գյուղզկոռալերացիան և թիե բամ-  
բակիկոռալերացիան այժմյան իրենց կառուց-  
վածքով անկարող պիտի լինեն ընդգրկելու  
այսորվա գյուղի աճող և զարգացող սոցիա-  
լիստական սեկտորի ընթացքը, քանի վոր  
նրանց կառուցվածքը գեռ գյուղին մոտիկ չեն  
Գյուղի արտադրանքի կոռալերացումը գյու-  
ղական միջոցների սոցիալիստական շինարա-  
րության մեջ ընդգրկելու և գյուղատնտե-  
ռության կոլլեկտիվացման հսկա խնդիրներն  
են, վորոնք այժմ պահանջում են ավելի  
ճկուն ու ավելի զործուն ապահարատներ։  
« Մինչեւ այժմ գեռ բամբակացան շրջան-  
ներում կոռալերացման և կոլլեկտիվացման  
աշխատանքները, վորոնց համար նպաստա-  
վոր պայմաններ կան, կարենոր ուշադրության  
չեն արժանացել մասամբ այն պատճռով,  
վոր կոռալերատիվ ցանցը լիովին չի ընդգրկել



FL0043922

Ա-  
2954

լան աշխատանքները, մի բաց,  
վորը վերացած պիտի համարվի այդ նոր  
կազմակերպչական ռեֆորմով:

Գյուղի սրված դասակարգային պայքա-  
րի ընթացքում բամբակորպերացիալի ամ-  
բողջ ստորին ցանցի հիմնական խնդիրնե-  
րից մեկը բամբակացանների կոլեկտիվա-  
ցումն և, յեթե ըստ հնդամբակի 30 թվին  
բամբակի ընդհանուր ցանքսի մեջ սոցիա-  
լիստական հատվածը պետք և հասցվի վոչ  
պակաս, քան 20 տոկոսի, ապա դժվար չի  
լինելու հնդամբակի վերջում այդ տոկոսնե-  
րը հասցնել առնվազն 50-60-ի:

Այս բոլոր ծրագրերն իրագործելու հա-  
մար մեր հիմնական անելիքը կայանալու լի-  
նրանում, վոր ընտրական աշխատանքնե-  
րում, ամենից առաջ ամբողջ կոռպերատիվ  
միավորներում ուժեղացնենք չքավորների,  
բատրակների և ակտիվ միջակների կորիզը  
նրանց գործոն մարմիններում, վորով մի-  
ալն հնարավոր և լինելու բամբակադոր-  
ծության ասպարիզում հաղթահարել բոլոր  
դժվարությունները և պաշտպանելով ճիշտ  
դասակարգային քաղաքականություն, ապա-  
հովել բամբակադործության հնդամբակի  
լրիվ կատարումը նաև մեր պայմաններում:

